

սումնարանաց տալու, այս ինքն է՝ 2000 ռ. Բազուայ Մարզախրական Ընկերութեան Օրիորդական դպրոցին Հայոց՝ այն պայմանաւ, որ միայն այդ գումարի տոկոսիքը մնալուի յօգուտ դպրոցին. 2000 ռ. Ալէքսանդրապօլու արական դպրոցին Հայոց նոյն պայմանաւ. 2000 ռ. Երեւանու արական դպրոցին Հայոց դարձեալ նոյն պայմանաւ. 500 ռ. Ղուբայու դպրոցին. 1500 ռ. գցել Լոմբարդ և սորա տօմսակը լինի Ղուբայու դպրոցի հոգաբարձուաց մօտ, որ սորա տոկոսիքը ի գործ դնեն ի վերոյ յիշատակեալ Խաչմազում Հայկական դպրոց պահելու. 1000 ռ. գցել Լոմբարդ՝ տոկոսիքովը Ղուբայու Աստուածածնայեկեղեցում մոմեր վառելու ի յիշատակ հոգւոյ հանգուցելոյն. 1000 ռ. գցել Լոմբարդ և դորա տոկոսիքը ի գործ դնել յօգուտ Շուշույ (Ղազանչեցուց) եկեղեցւոյ քահանայից, որը պարտաւոր լինին ի տարին հինգ նաւահատեաց օրեր պատարագ մատուցանել ի յիշատակ հոգւոյ հանգուցելոյն և նորա ազգականաց. 500 ռ. տալ Ղուբայու դպրոցի հոգաբարձուաց, որ նորա տոկոսիքը վճարեն տարէ ցտարի Ղուբայու Հայ քահանայից նոյն պայմանաւ. 1000 ռ. տալ Ղազանչեցուց եկեղեցւոյն շինութեանը (հինի փոխարէն նորը շինվում է այժմ)։ Այս բոլոր նուէրքը ոչ ժամանակաւորապէս է, այլ մշտնջենաւոր։

Որչափ լուսահոգւոյն կտակն է գովանի, նոյնչափ հրապարակական գովասանաց են արժանի նորա կտակակատար Պ. Աստուածատրեանցը և ամուսինը՝ Մարգարիտ Եարութիւնեան Ալէքսանեանցը։ Ահանատես եմ սոցա իւրաքանչիւր գործառնութեան կտակին վերաբերութեամբ. ահանատես եմ թէ ինչպէս զոքա ջան ի գործ եղեալ կաշխատէին հանգուցելոյն կայքը բարձր դնով վաճառելու. արդարեւ հասին իւրեանց փափազին, պատրաստական զրամ ձեռք բերելով նոյն կայքէն այնքան՝ որքան պիտոյ էր կտակը ճշդիւ կատարելու, ու անցեալ փոստով ուղարկեցին լիովին ուր և ում որքան գումար կտակած էր։

Ուրեմն Աստուած ողորմեսցի արժանայիշատակ Պօղոս Ալէքսանեանցի հոգուն, խորին շնորհակալութիւն Պ. Աստուածատրեանցին և Մարգարիտ

Եարութիւնեանցին, որ այսպէս շուտով և ճշդիւ կատարեցին լուսահոգւոյն սրբազան կամքը։ Կը խնդրենք ի Խմբագրութենէդ տեղի մի շնորհել նաւակիս պատուական Ամագրիդ թերթերու մէջ։

Ներսէս Սարգսեանց.

1872 թ. Փետրուարի 4 թ.։

Ի Ք. Ղա-Քայ։

Պարոն Գրիգոր Տէր Յակովբեան հեռուեալները կհաղորդէ մեզ ի Վաւրիժոյ։

ԵՐԿԻՆԱՆՐԺ.

1840 թուիցն մինչ այսօր թէպէտ շատ երկրաշարժք եղած են Ատրպատական նահանգում, բայց ամենէն նշանաւորն և երեւելին էր ներկայ Սեպտ, ամսոյս 2ին զիշերուայ հինգ ու կէս ժամու արեւելքէն արեւմուտք տեղի ունեցածը, որ իւր սարսափելի ձայնից և սաստիկ թնդիւնից երկիւղին բռնաբարեց զբնակիչները արտաքս փախել, ուր Պարսիկք բնութեան գաղտնիքը ըստ իւրեանց վաղնի սովորութեան՝ աստուածային նշանաց և սքանչելեաց տեղ ընդունելով՝ աղիոողրմ ձայնիւ երկնից օգնութիւնն կը խընդրէին, քանզի կարծես թէ ամենայն տան տակ դարձնոցներ կային, ուր կռանահարութեան ահարկու ձայներ լսել կը լինէին. թէպէտ այսպիսի սաստիկ բայց բարեբախտաբար բոլորովին անվնաս մնաց քաղաքն, քանզի մի և կէս բոլէ հազիւ տեւեց։

ՎՍԵՄ. ՄԵԼՔԱՆ ԽԱՆ.

Հեռագիրը հաւաստեց ի Թէհրանայ՝ թէ Միրզայ Մեյքում Խանն Լոնդոնում Պարսից գեսպան անուանեցաւ։

ՄԵՄ. ԱՆՏՕՆ ՄԻՐԶԱԲ.

Հայազգի Միրզայ Անտօն Մաթիւան՝ որ ի քանի ամաց հետէ Գաղղիական և Պարսկական

Լեզուաց Թարգմանի պաշտօն կը վարէր Վալիա-
թի զրանը (Գահաժառանգի մօտ), նոյն մեծ իշ-
խանի բարձրագոյն հրովարտակաւ Խանութեան
տնտղոսն արժանապէս ընկալաւ:

22 Սեպտ. 1872 թ.

Ի Գաւառ:

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ ՀԱՅՈՑ ԱՐՑԱԽՈՑ.

Իսթաթթու-լեան Արարատ Աստաթթու.

Հոգաբարձութիւնս ընդ այսմ առաքելով ի
Խմբագրութիւնդ զհամառօտ տարեկան հաշիւ մը-
տից և ծախուց արդեանց Ազգային — հոգեւոր
Դպրոցին Հայոց Ղարաբաղու՝ սկսեալ ի 1 էն
Յուլիսի 1871 ամի ց1 ն Յուլիսի 1872 ամի, ըն-
թերցեալն ի լուր Հայոց հասարակութեան քա-
ղաքիս յաւուր հանդիսի տարեկան հարցաքննու-
թեան աշակերտաց դպրոցին, որ 30 Յուլիսի
տարւոյս, հանդերձ կազմեալ ի նմին աւուր վկա-
յարանութեամբ և ցուցակաւ նորին, — խնդրէ
յարգանքօք ի տիպ մուծանել զայս ընդ ձեռն
պատուական «Արարատ», ամսագրոյդ ի տեղեկու-
թիւն համազգեաց մերոց:

Տեսակէ հոյս արդեանց.

Մնացորդ ի դպրոցապատկան ար-
դեանց առձեռն պատրաստ դրամք
առ 1 ն Յուլիսի 1872 ամի . . . 3775 19¹/₄

Տարեկան զուարճարտ է 1 էն Յուլիսի 1874

թի ց1 ն Յուլիսի 1872 թի, այն է,

20, 20 կօպէկ սրբադրամք, ժողո-
վեալք յիւրաքանչիւր գերդաստանէ
Հուշի քաղաքի և գաւառի նորին ընդ
ամենն . . . 1671 60

Մի մի ռուբլի սրբադրամք՝ ար-
դիւնք ի քահանայից զիւղորէից Հու-
շոյ գաւառի . . . 157

Մասն յարդեանց վանքապատկան
կալուածոց . . . 1421 55

Արդիւնք ի վանքապատկան անտա-
ռաց . . . 555

Վամուր նուէրք ի Հայոց պա-
կտեարց . . . 288 51

Արդիւնք ի կրտակէն Մամալաճա-
ռութեան . . . 600

Խաչահամրոյր արդիւնք ուխտա-
տեղեաց . . . 282 59

Նուիրադրամք վկայականաց վասն
ծննդեան և մկրտութեան . . . 159

Գանձանակադրամք ժողովեալք յօ-
գուտ դպրոցին . . . 162 43¹/₄

Գանձանակադրամք, ժողովեալք
յանուռն սրբոյ վանիցն Գանձասարու . . . 50 35¹/₄

Տարեկան հասոյթ ուսման աշա-
կերտաց դպրոցին . . . 173

Գինք վաճառեալ դպրոցապատ-
կան գրքուկաց . . . 38 59

Արդիւնք դպրոցապատկան տպա-
րանին . . . 75

Մասն վաճառեալ փայտեղինաց
դպրոցապատկան շտեմարանին . . . 221 60

Յետս դարձուցեալ դրամք ի գնոց
բանկովի ըրիւթաց . . . 21 65

Ստացեալ եղև ի Հուշաքաղաքացի
Պարոն Սիմէօնէ Տէր Յովհաննէսեանց
դրամքն, տուեալք նմա տոկոսեօք
յաճումն . . . 1066

Ստացեալ եղև ի յիշատակեալ Սի-
մէօնէ Տէր Յովհաննէսեանց և յեղ-
բօրէ նորա Գէորգայ, դրամքն, տը-
ւեալք տոկոսեօք . . . 667 76

Ստացեալ եղև ի վիճակային Հա-
յոց Վոնսիստօրիէն Ղարապաղու գու-
մարն, որ պարտ էր դպրոցին ի 1858
ամէ հետէ . . . 500

Ստացեալ եղև ի Զարբերդեցի ա-
նուանեալ հասարակութենէն Հու-
շի քաղաքի դրամքն, նուիրեալք ի
նոյն հասարակութենէն ի պէտս վերա-

նորոգութեան տաճարի սրբոյ վանիցն Գանձասարու . . . 518

Գումարն է 12404 513⁴

Ծանօթ: — Յայտմ գումարոյ 6515 ռուբլի 83 կոպ. տուեալ են ի գին 7000 ռուբլոյ արժողութեան եօթն հատ մի մի հազարանոց բանկովի թիւէթաց, որք գտանին ի պահեստի ընդ դպրոցապատկան մնացեալ դրամոցն առ անդամ և գանձապետ հոգաբարձութեան դպրոցին՝ Պ. Գրիգորն Ղուլիեանց

Տեւակ + Ժախոց.

Ռոճիկ.ք ուսուցչաց և վերակացուի դպրոցին և ծխական նախակրթարանին . . . 2245 12

Ռոճիկ.ք Ատենադպրի և գրագրի հոգաբարձութեան դպրոցին և ծառային և վերատեսչի վանքապատկան կալուածոց . . . 499 80

Սննդադրամք, տուեալ.ք միաբանաց վանօրէից Հուշոյ գաւառի . . . 245

Իււանական ծախք ի պէտս դպրոցին, ծխական նախակրթարանին և հոգաբարձութեանն . . . 210 23¹₂

Վարձ տան ի պէտս ղետեղման դպրոցին ծխական նախակրթարանին և հոգաբարձութեան . . . 228

Ի գին գրքուկաց ի պէտս դպրոցին . . . 84 25

Վարձատրութիւնք, տուեալ.ք գործակալին Վարանգու, Զրաբերգու և Զառիստու վասն երկուց ամաց, առ ի ժողովելոյ նորա զդպրոցապատկան արդիւնս . . . 240

Ճանապարհածախք տուեալ.ք վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու և անդամոց հոգաբարձութեան ի դիմելն նոցա ի Բ. Տփիսիս ըստ գործոց կալուածոց Խօթայ վանից . . . 200

Հանգերձապին տուեալ անդամոց հոգաբարձութեան դպրոցին ի դիմելն ի Տփիսիս ըստ վերոյիշատակեալ գործոցն . . . 100

Ճանապարհածախք, տուեալ.ք հաւատարմին և վերատեսչին վանքապատկան կալուածոց վասն դիմելոյ նոցա ի վանքապատկան կալուածսն . . . 40

Դրամք, ծախեալ.ք վասն անհրաժեշտ ծախուց ի պէտս կալուածոց Խօթայ վանից . . . 114

Գումարն է 4206 40¹₄

Զոր հանեալ ի վերոգրեալ մօից գումարոցն՝ մնայ առ 1. Յուլիսի 1872 ամի առ ձեռն պատրաստ դուար . . . 8198 11¹₄

Ծանօթ: — Գոն այլ ևս դպրոցապատկան մեծ և փոքր գումարք դրամոց ի նախանցեալ ժամանակաց մնացեալ.ք ի վերայ զանազան անձանց, ուստի հոգաբարձութիւնս հոգ տանի ստանալ և զայնոսիկ:

Վ Լ Կայաբանութիւն.

630 Յուլիսի 1872 ամի յետ աւարտման տարեկան հրապարակական հարցաքննութեանն աշակերտաց Աղղային — Հոգեւոր Դպրոցին Հայոց Ղարաբաղու սկսելոյ 33 — էն Յուլիսի և աւարտելոյ ի 20 նոյն ամսոյ վասն վերջին և առաջին վեց վեց ամսոց 1871 և 1872 ամաց, այն է՝ ի 1 — էն Յուլիսի 1871 ամի ց1 — ն Յուլիսի 1872 ամի, ի ներկայութեան Վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու, որ և նախագահի Հոգաբարձութեանս, Գեղապատի. Սարգիս Արքեպիսկոպոսի և Հոգաբարձուաց Նորին ևս և Հայոց Հասարակութեան Հուշի քաղաքի, կազմեցաւ սոյն այս վկայաբանութիւն, և ըստ ի յայտ եկեալ ի կազմեալ ցուցակէն յառաջագիմութեանց վարուց և բարուց աշակերտացն՝ երեւցաւ այսպէս, նախ՝ թէ՛ պարզեատրեցան դպրոցապատկան մատնիւք 8 յառաջդէմ աշակերտք: Երկրորդ՝ վարձատրեցան զովասանական թղթովք 62 աշակերտք, Երրորդ՝ փոխադրեցան դասատանէ ի դասատուն, այն է՝ ի ծխական նախակրթարանէ՝ յառաջին դասատուն 31 աշակերտք, յառաջնոյն՝ յերկրորդն 32 աշակերտք, յերկրորդէն՝ յերրորդն 17 աշակերտք, իսկ յերրորդէն ի չորրորդն 11 աշակերտք:

ի Հոգևոր Դպրոցին գտանին չորք դասատուներ,	
յորոց մինն է ծխական նախակրթարանն, յո-	
րում են աշակերտք.	109
յԱ—ջին դասատան.	57
յԲ—ըդ	21
յԳ—ըդ	14

գումարն է. 201

յորոց	
Հոգևորականք.	36
Աշխուհականք.	26
Հարկատուք.	139

գումարն է 201

Թիւ Ուսուցչաց,	
Պաշտօնակատար տեսչի.	1
Ուսուցիչք.	8
Վերակացու.	1

գումարն է 10

ի Հոգաբարձութեան Դպրոցին	
Նախագահ.	1
Հոգաբարձուք Հոգևորականք և Աշխար-	
հականք.	8
Փոխանորդ նոցին.	6
Ատենադպիր.	1
Գրագիր.	1

Եւսէ:—Ուսանելի առարկայք են 11, այն է՝
 Վրօնն, Հայոց, Ռուսաց և Գաղղիացւոց լեզուք,
 Թուարանութիւն, Աշխարհագրութիւն Հայաստա-
 նի, Ընդհանուր Պատմութիւն, Ընդհանուր Աշխար-
 հագրութիւն, Երգեցողութիւն, Ազգային պատ-
 մութիւն և Վայելչագրութիւն:

Անդամք Հոգաբարձութեան

Յաննէս Գալստիան, Մոխստուրեանց.

Յակոբ Մ. Շահնազարեանց.

Զատարէս Աղամանեանց.

Գրիգոր Ղալիկեանց.

Ա. Եւսէսարպէր—Ս. Հասան—Զաւակեանց.

Ի ԳԱՎՐԻԺՈՅ.

Մեծաւ շնորհակալութեամբ ստացայ
 հետեւեալ պատասխանը Արժ. Յովհան-

նէս վարդապետէ Ներսիսեան, և ուրախու-
 թեամբ սրտի և հոգւոյ կփութամ հա-
 զորդել իմ սիրելի համազգայնոց:

Մանկ.

Քանզի մեծաւ հոգատարութեամբ և զգուշու-
 թեամբ՝ (եթէ չ'իցեն պարծանք ասացից) թեա-
 կոխեմք հանապազ ըստ նուիրական մերն պաշ-
 տման յայն արթնութիւն՝ յոր պղբու նամա-
 կաւ զիս հրաւիրէ Ձերդ եղբայրու-
 թիւն, ազատ պահել զԼուսաւորչաճին բանաւոր
 Հօտն երկնաւոր Հօտապետին յոչխարազգեստ
 դայլոցն ձիրանաց, որք զգժնէութիւն ժանտու-
 թեան իւրեանց պատրուակեալ արտաքին թա-
 րեօք՝ երեկն ուղղափառ քարոզք Քանին ձմար-
 տութեան, յորոց ծուղակ պատրողական խայծիւք
 ո՛չ բնաւ յաջողեցան խօնարհեցուցանել զհաս-
 տատամիտ և կրօնասէր Հայկազնեայն Ատրպատա-
 կանի, որք թէպէտ ըստ մեծի մասին ընկճեալ
 յաղքատութենէ, բայց նոյաւ հանդերձ հաստատ
 են ի կոչումն կրօնի՝ յոր կոչեցան ի ծննդնէ
 սուրբ աւագանին, սմին իրի գրեմ զցրումն յօ-
 դուածոց:

Արժամապատիւ եղբայր, յայս կէտ պատգա-
 խանագրութեանս ներկայ են ինձ երկու անձինք
 ի Խոյ քաղաքէ, և չորք ի Աորձեից նահանգէ,
 որք զոր հաւաստեան զիտեմ, ձգբոտն ինձ յա-
 սելն թէ, ո՛չ թն միայն ո՛չ գտանին ի մերայինս
 կրօնափոխք՝ այլ և բնաւ իսկ ոչ հերետիկոսացն
 քարոզք:

Յնրմիոյ ընկալաք դտեղեկագիր ի գործակալէն
 մերմէ յարժանապատիւ Յակոբ վարդապետէ Ն-
 ղիազարեան, որ յայտ առնէ մեզ, թէ և ոչ մի
 անհատ ազգային անգամ գտանի հակամէտ թող
 թէ կրօնափոխ, թէպէտ և բազմաքիտոն աշխա-
 տանօք տքնին, տառապին և ձգնին եկամուտ մի
 ի Հայոց առնել՝ խոստանալով ձրիարար ուսու-
 ցանել, տալ զգրեանս, ընդ նմին և դրամ ան-
 դամ, այլ ողորմութեամբն Աստուծոյ ցարդ ի դե-
 րե ելին բոլոր ջանք նոցա և մտատանջութիւնք:
 Իսկ աստ ի քաղաքիս ոչ ուրեք հետք կրօնա-
 փոխութեան նշմարին անգամ, վասն որոյ որպէս

Նորին ԱՆՀ Օծութիւնն, Չերդ մեծապատիւ եղ-
բայրութիւնն, աղգասէլք և պաշտպանք եկեղեց-
ւոյ սաստիկս ցաւին և խոր ի սիրտ խոցին, զող-
բալի վիճակ կորստեան Ազգին կարգալով յայն
կեղծուպատիր յօգուած անդգուշ Աշխէն, ո՛չ սա-
կաւ և մէք ընդ աստի աղգայնոց ցաւիմք ընդ այն
յիմարութիւն, որոյ գրիչն աստ ի Դաւրէժ խոս-
տովան լինի, թէ չէ այն իմ յօգուած:

որում սատար է լրտերա-
միտ ոմն Ս. զամաստցի անսկիւ թշնամի հոգեորա-
կանութեան Ազգիս Հայոց, Այս անմիտ ի Տփլիս-
սայ գրեաց քանի ամսով առաջ զնամակ ինչ առ
Գեր. Առաջնորդ տեղոյս միջնորդ լինել բարձրա-
գոյն Դրան Պարսից՝ ծախիւք Պետութեանն առա-
քել զերկոսին եղբարս իւր ի Գիմաղիայն Յըփ-
խեաց, զոր դժուարին և անսովոր նոր ինչ հա-
մարեալ սորա, զանց զնովաւ արար, յոր սակս
կիրք նախանձու վառեալ ի հնոց որախ նորա, ա-
րատաւորել զԱռաջնորդն խորհեցաւ, անմտաբար
դատելով, թէ այս արատ՝ Առաջնորդին միայն
վերաբերի և ոչ լրութեան աղգիս:

Իսկ ի Մարաղայ յիրաւի որջանալ կամեցան
քանի ինչ գայլք մարդակիրալ և սկսան խախ-
տել զոմանս ի մտաց՝ յինքեանս զնոսս ձգելով,
ձրիարար ուսուցանելով, և զգրամս բաշխելով,
զորմէ շուտափոյթ տեղեկացեալ մեր՝ հո-
գացաք զարժանն, և արդէն փախստեալ զնա-
ցեալ չորից անձանց խախտելոց ի մտաց՝ ան-
կան յորջս իւրեանց՝ յորմի առ Ամերիկացի
քարոզիս, որք ի բազում ամաց հետէ որսա-
ցեալ զբազմութիւ անտէրունջ Ասորիս՝ բունեն
անգանօր. այլ որպէս լսեմք՝ հնարիւք իմն և զաղտ-
նի միջամտութեամբ պաշտպանացն իւրեանց
ունին վերադառնալ. յոր եթէ յաջողեցին՝ ան-
շուշտ և ես գնացից անձամբ խօսել ընդ ժողո-
վրդեանն և զարժան տնօրինել:

Ապաքէն վախճան տալով պատասխանեոյ ա-
ռաջին երեսի նամակիդ՝ յերկրորդ փութալ հար-
կադրիմ:

Որպէս նկատեմ, ո՛ր պատուական Եղբայր իմ,
ի ցուցակէ գեղջ Արարգաղու, ոչ զիւղօրայք 33,
այլ 27 գտանեմ, յորոց չորք միայն համեմատա-
բար են մեծ, յորոց առաջինն բաղկանայ ի 70

տանց, երկրորդն՝ երրորդն՝ իւրաքանչիւրն 335
տանց, և չորրորդն 330 տանց, իսկ բազումք ի
մնացորդացն իւրաքանչիւրն 39 տանց, և այլքն
ի 10—11, 13, 14, և 15 տանց, և մին միայն ի
գեղջն բաղկանայ ի 24 տանց, Որք ըստ մեծի մասին,
անաշատութեամբ ասեմ, և ոչ ստիմ, են աղքատ
երկրագործք, որք ի բանիլ գարնան կանենն ի գոր-
ծքս մշակութեան և երկրագործութեան իւրեանց,
մինչ գրէթէ ի ձմեռնամուտն, յորում մանկունք
նոցին ժողովեալք՝ ուսանին առ ոոսս քահանա-
յից իւրեանց, իսկ առաջին երկրքին մեծ գիւղքն
ունին զմանկավարժ, իսկ զայլոց ևս հետզհետէ
հոգացուք բերելով զմանկունս նոցա յուսումն
յաղգային վարժարանին Դաւրիժոյ:

Աւերորդ համարիմ մանրամասնաբար քննա-
դատել զբպարտութիւնս կեղծուպատիր յօգուա-
ծոյն, քանզի ինքնին բացայայտ ծաղը և նուշա-
ւակ լինի ժողովրդոցս:

Յ2 Սէպտ. 1872 —մ

Ի Ղաւթէ:

ԵՐԿՐԱՇԽԻԹ Ի ԳԱՆՁԱԿ

Մեր Արժանապատիւ թղթակից կհաղորդէ ի
Գանձակէ, որ ամսոյս 2ին անդ երկրաշարժ պա-
տահել է, այնպէս որ ժողովուրդն զուրսէ փախած
տեղւոյն Ս. Յովհաննէս եկեղեցիէն:

Դռհութիւն Աստուծոյ՝ ոչինչ փնաս չէ պա-
տահած:

ՀԱՍՏԱՌՈՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՐԻՄՈՒ ԵՒ ՊԵՍՍԱՐԱՊՈՅ ԲԱՆԻ
ՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԵԻԱԿԱՆ ԳՊՈՑԱՅ ԵՐԿՐԱՅ ԴՐՈՒԹԵԱՆԸ:

(Շաբաթական-իւն):

Բ. ԴԱՐՈՅ ԹԵՐԱՊԵՒՅ:

Թէոդոսիոյ ժողովրդական դպրոցը քանի մի
տարի է միայն որ սկսած է բարեկարգութեան
տակ ի ինալ շնորհիւ ուսումնասիրութեան Ա-